



ԱՀՏԵՍԻ ՍԵՐԳԻՍ՝ որ
 իւր հօրը կենդանութեան ատեն կը յա-
 ճախէր կայսերական
 պալատն եւ քաջա-
 վարժ էր անոր արու-
 եստին մէջ, Յարութիւնի մահուան օրն
 իսկ՝ առանձինն արքունի հրո-
 վարտակաւ Արտուշէայ ուկերէւ
 կը կարգուի: Իւր արուեստին յաջողակութեան
 հետ՝ ըստ պատմութեան, ունէր մարմնոյ եւս գե-
 ղեցիկ յատկութիւններ, բարձր հասակ եւ կաշմ-
 բուռն կազմուածք մը, որ պատճառ եղած է, ինչ-
 պէս կը կարծուի, այս գերդաստանին Տիւզ ա-
 նուանակոչութեան: Վասն զի կը պատմուի՝ թէ
 օր մը Սուլթան Ահմէտ Գ. զինքն արքունի պար-
 տիզին մէջ նշմարելով՝ անոր գեղեցկակազմ,
 յաղթանդամ եւ բարձրասրուն մարմնոյն երկայ-